

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
նոյեմբերի 15-ի նիստի N 46
արձանագրային որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության կառավարության և

_____ կառավարության միջև

ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին
համաձայնագրի

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և _____
կառավարությունը (այսուհետև՝ Պայմանավորվող Կողմեր),

Ցանկանալով զարգացնել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը երկու
պետությունների միջև,

Նպատակ ունենալով ստեղծել բարենպաստ պայմաններ մի Պայմանավորվող Կողմի
ներդրողների ներդրումների համար մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում,

Ընդունելով, որ ներդրումների խրախուսումը և փոխադարձ պաշտպանությունը
կնպաստեն երկու պետությունների միջև գործարար ակտիվությանը,

համաձայնվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Հասկացություններ

Սույն Համաձայնագրում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1. Ներդրումներ՝ գույքի կամ իրավունքների ցանկացած տեսակ, որը ներդրված է մի
Պայմանավորվող Կողմի ներդրողի կողմից մյուս Պայմանավորվող Կողմի պետության

տարածքում, համաձայն վերջինիս օրենսդրության, մասնավորապես, սակայն ոչ բացառապես, ներառելով.

ա) բաժնետոմսերը, բաժնեմասերը և կապիտալի մասնակցության այլ ձևերը, պարտատոմսերը և այլ նմանատիպ պարտավորությունները կազմակերպությունում, այլ պարտավորությունները արժեթղթերը և փոխառությունները, թողարկված Պայմանավորվող Կողմի ցանկացած ներդրողի կողմից,

բ) պայմանագրերից բխող դրամական պահանջները և ցանկացած այլ գույքի կամ պարտավորության գծով պահանջները, որոնք, համաձայն պայմանագրերի, ունեն տնտեսական արժեք,

գ) մտավոր սեփականության իրավունքները, ներառյալ, մասնավորապես, սակայն ոչ բացառապես. հեղինակային իրավունքները, ապրանքային նշանները, արտոնագրերը, արդյունաբերական նախագծերը և նմուշները, տեխնիկական գործընթացները, նոու-հաունները, առևտրային գաղտնիքները, ապրանքային անունները և բարի համբավը,

դ) օրենսդրությամբ, պայմանագրերով կամ օրենսդրությանը համաձայն տրամադրված ցանկացած արտոնագրով կամ թույլտվությամբ սահմանված ցանկացած իրավունք, ներառյալ բնական պաշարների հետախուզման, ուսումնասիրության, արդյունահանման և օգտագործման իրավունքները և այլ տնտեսական կամ առևտրային գործունեություն իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու իրավունքները, համաձայն այն Պայմանավորվող Կողմի պետության օրենսդրության, որի տարածքում ներդրումը կատարվել է.

ե) ցանկացած այլ նյութական և ոչ նյութական, շարժական և անշարժ գույք և հարակից գույքային իրավունք, ինչպես օրինակ, վարձակալությունը, գրավը, պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունքը և գրավականը:

«Ներդրում» տերմինը վերաբերում է նաև վերաներդրման նպատակով պահպանված հասույթին և իրացումից ստացված գումարներին:

Գույքի և իրավունքների ներդրման կամ վերաներդրման իրավական ձևի փոփոխությունը չի ազդի դրանց դիտարկմանը որպես ներդրումների:

2. Պայմանավորվող կողմի ներդրող՝ յուրաքանչյուր Պայմանավորող Կողմի համար նշանակում է.

ա) Պայմանավորվող կողմի պետության քաղաքացի կամ իրավաբանական անձ, որն ունի ներդրում կատարելու մտադրություն, կատարում կամ կատարել է ներդրում մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում, նշելով, սակայն, որ այն ֆիզիկական անձն, որն ունի երկրորդ քաղաքացիությունը, պետք է իր հիմնական քաղաքացիությամբ համարվի Պայմանավորվող կողմի քաղաքացի,

բ) իրավաբանական անձիք, որոնք ստեղծվել կամ հիմնվել են այդ Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան և ճանաչվում են որպես իրավաբանական անձ, և որոնք գտնվում և իրականացնում են իրենց գործունեությունը մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում:

3. Կազմակերպություն՝ ցանկացած իրավաբանական անձ, շահույթ հետապնդող կամ չհետապնդող, մասնավոր կամ պետական սեփականություն հանդիսացող կամ վերահսկողության ներքո գտնվող, որը հիմնվել է մի Պայմանավորվող Կողմի պետության օրենսդրության համապատասխան կամ տնօրինվում կամ էապես վերահսկվում է Պայմանավորվող Կողմի ներդրողների կողմից և ներառում է կորպորացիան, տրեստը, ընկերակցությունը, կազմակերպության մասնաճյուղը, համատեղ ձեռնարկությունը, ասոցիացիան կամ այլ նմանատիպ կազմակերպությունը:

4. Եկամուտ՝ ներդրումներից ստացված գումարները անկախ այն բանից, թե ինչ տեսքով են դրանք վճարվել և, մասնավորապես, բայց ոչ բացառապես, ներառում է շահույթը, տոկոսները, կապիտալի աճը, շահաբաժինները, ռոյալթիները և կառավարման վճարները, տեխնիկական օժանդակությունը կամ այլ վճարումներ՝ անկախ դրանց տեսակից:

5. Լուծարում՝ ցանկացած գործողություն, որը իրականացվում է ներդրման լիովին կամ մասնակի դադարեցման նպատակով:

6. Տարածք՝

ա) Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության հողային տարածքը, տարածքային ջրերը և օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն ունի ինքնիշխան իրավունքներ և իրավասություն, համաձայն գործող ազգային օրենքների և միջազգային իրավունքի,

բ) _____ համար՝ _____ հողային տարածքը, ներքին ջրերը, նրա ծովային տարածքներին հարող տարածքները և օդային տարածքները, որոնց նկատմամբ

_____ ունի ինքնիշխան իրավունքներ և իրավասություն համաձայն, համաձայն իր գործող ազգային օրենքների և միջազգային իրավունքի:

7. Ազատ փոխարկելի արժույթ՝ ազատ փոխարկերի արշույթ, ինչպես սահմանված է Միջազգային արժույթային հիմնադրամի կողմից համաձայն Միջազգային արժույթի հիմնադրամի Համաձայնագրի Հոդվածների:

8. Առանց հետաձգման՝ այնպիսի ժամանակահատված, որը սովորաբար պահանջվում է փոխանցում իրականացնելու նպատակով անհրաժեշտ ձևակերպումները ավարտելու համար: Այս ժամանակահատվածը կսկսվի փոխանցման համար դիմումը ստանալու օրվանից և չի կարող գերազանցել մեկ ամիսը:

ՀՈԴՎԱԾ 2

Ներդրումների պաշտպանությունը և խրախուսումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կխրախուսի և կստեղծի բարենպաստ պայմաններ իր տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների իրականացման համար, և կընդունի նման ներդրումները համաձայն իր օրենսդրության:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր պետության տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ պետք է ապահովվի արդար և հավասար ռեժիմ և լիակատար պաշտպանվածություն ու ապահովություն՝ համաձայն միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և սույն Համաձայնագրի դրույթների: Պայմանավորվող Կողմերից ոչ մեկը չպետք է անհիմն կամ խտրական միջոցներով խոչընդոտի մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների օգտագործմանը, կառավարմանը, գործադրմանը, ընդլայնմանը, վաճառքին կամ այլ գործողությանը, որն ուղղված է ներդրումների տնօրինմանը:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի ներդրողների կողմից իրականացված ներդրումները ենթակա չեն լրացուցիչ պահանջների, որոնց հետևանքով կարող է վնաս հասցվել դրանց եկամտաբերությանը կամ խոչընդոտվել օգտագործումը, կառավարումը, ղեկավարումը, ընդլայնումը, վաճառքը կամ այլ օտարումը:

ՀՈԴՎԱԾ 3

Ազգային և Առավել Բարենպաստության ռեժիմ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր պետության տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների և եկամուտների նկատմամբ պետք է սահմանի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նա տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների համար նույնանման պայմաններում, որն ավելի բարենպաստ է:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր պետության տարածքում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողներին՝ կապված նրանց ներդրումների կառավարման, պահպանման, օգտագործման, տնօրինման կամ այլ տիրապետման հետ, պետք է տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նա տրամադրում է իր սեփական կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին նույնանման պայմաններում, որն ավելի բարենպաստ է:

3. Սույն հոդվածի ազգային ռեժիմի և առավել բարենպաստության ռեժիմի վերաբերյալ դրույթները չեն վերաբերում բոլոր առկա կամ հետագա արտոնություններին, որոնք յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմը տրամադրել է համաձայն մաքսային, տնտեսական կամ արժույթային միության, ընդհանուր շուկայի կամ ազատ առևտրի գոտու անդամակցության կամ առնչության հիման վրա:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կրնդունի մաքսային, տնտեսական կամ արժույթային միության, ընդհանուր շուկայի կամ ազատ առևտրի գոտու անդամակցությունից բխող մյուս Պայմանավորվող Կողմի պարտավորությունները, ներառյալ նրա պարտավորությունները մաքսային, տնտեսական կամ արժույթային միության, ընդհանուր շուկայի կամ ազատ առևտրի գոտու վերաբերյալ միջազգային կամ փոխադարձ համաձայնագրի համաձայն:

5. Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես պարտավորեցում մեկ Պայմանավորվող Կողմին՝ տարածելու մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների վրա ցանկացած ռեժիմի շահավետությունը, առավելությունները և արտոնությունները, որոնք կարող են տրամադրված լինել առաջին Պայմանավորվող

Կողմից, համաձայն ցանկացած միջազգային համաձայնագրի կամ պայմանավորվածության:

6. Տարակարծություններից խուսափելու համար սույն Հոդվածը կկիրառվի միայն սույն Համաձայնագրի 2-րդ և 6-րդ Հոդվածներում նշված ռեժիմների նկատմամբ և չի կիրառվի սույն Համաձայնագրից բխող ցանկացած վեճերի լուծման գործընթացներում ներդրողների իրավունքների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Վնասների փոխհատուցում

1. Պայմանավորվող Կողմի ներդրողին, որը վնասներ է կրում մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում պատերազմի կամ այլ զինված ընդհարման, արտակարգ իրավիճակի, ապստամբության, խռովության, քաղաքացիական և զանգվածային անկարգությունների կամ այլ նման իրավիճակների հետևանքով, մյուս Պայմանավորվող Կողմը կտրամադրի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն, որը այս Պայմանավորվող Կողմը տրամադրում է իր կամ որևէ երրորդ պետության ներդրողներին նույնանման պայմաններում, որն ավելի բարենպաստ է:

2. Չխախտելով սույն Հոդվածի 1-ին կետի պայմանները, մի Պայմանավորվող Կողմի ներդրողը, որը մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում սույն Հոդվածի 1-ին կետում նշված իրավիճակներում վնասներ է կրում վերջինիս.

ա/ զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ներդրումների կամ դրանց մի մասի բռնագրավման

բ/ զինված ուժերի կամ իշխանությունների կողմից, ռազմական գործողություններով չպայմանավորված կամ իրադրության անհրաժեշտությունից չբխող, նրանց ներդրման կամ դրա մի մասի ոչնչացման,

պատճառներով, պետք է ստանան վերականգնում կամ համարժեք նախնական փոխհատուցում, որը կլինի ոչ պակաս բարենպաստ քան այն, որը կտրամադրվի մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողին կամ որևէ երրորդ պետության ներդրողին նույնանման պայմաններում: Այդպիսի վճարումները կլինեն ազատ փոխարկելի արժույթով, առանց հետաձգման:

ՀՈԴՎԱԾ 5

Օտարում և փոխհատուցում

1. Մի Պայմանավորվող Կողմի ներդրողի ներդրումները մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն օտարվեն, ազգայնացվեն կամ օտարմանն ու ազգայնացմանը հավասարազոր հետևանքներ ունեցող այլ միջոցառումների ենթարկվեն (այսուհետև՝ օտարում) բացառությամբ հանրային շահերի դեպքում: Օտարումը պետք է իրականացվի Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով, ոչ խտրական հիմքերի վրա, նախնական, համարժեք և արդյունավետ փոխհատուցմամբ: Այդպիսի փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման իրական շուկայական արժեքին՝ օտարման կամ նախատեսվող օտարման մասին հանրորեն հայտնի դառնալու պահից անմիջապես առաջ, կախված այն բանից, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել: Փոխհատուցումը պետք է վճարվի առանց հետաձգման, լինի ամբողջովին իրացվելի և ազատ փոխարկելի:

2. Պայմանավորվող Կողմի տուժած ներդրողն իրավունք կունենա օտարումն իրականացնող Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, այդ Կողմի դատական և այլ իրավասու կամ անկախ մարմնի կողմից իր դեպքի անհապաղ վերանայման՝ ներառյալ իր ներդրումների գնահատումը և փոխհատուցման վճարումը, սույն Հոդվածում սահմանված սկզբունքներին համապատասխան:

Այդպիսի փոխհատուցումը պետք է հաշվարկվի ներդրողի կողմից ընտրված ազատ փոխարկելի արժույթով՝ հաշվարկման օրը այդ արժույթի փոխանակման համար գործող ամենաբարձր շուկայական տոկոսադրույքի հիման վրա, և օտարման իրականացման պահից մինչև վճարման օրը ընկած ժամանակահատվածի համար պետք է ներառի շուկայում ձևավորված առևտրային տոկոսադրույք, որը ամեն դեպքում չպետք է պակաս լինի, քան «LIBOR»-ի գործող տոկոսադրույքը կամ համարժեքը:

3. Հետագա որոշակիության համար օտարումը կներառի այնպիսի իրադրություններ, երբ մի Պայմանավորվող Կողմը օտարում է իր պետության տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան կազմավորված կամ հիմնված կազմակերպության գույքը, որում մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողը ներդրում ունի, ներառյալ

բաժնետոմսերի, բաժնեմասերի, պարտատոմսերի կամ այլ իրավունքների կամ տոկոսների սեփականությունը:

ՀՈԴՎԱԾ 6

Փոխանցումներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իր պետության տարածքում պետք է ապահովի, որ իր պետության տարածք և իր պետության տարածքից արվող փոխանցումներն իրականացվեն ազատ և առանց հետաձգման կապված մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների հետ, ներառյալ.

ա) կապիտալի և ներդրումների պահպանման և ընդլայնման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարները,

բ) Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ սահմանված վճարումները կատարելուց հետո առաջացած զուտ շահույթը, կապիտալի աճը, շահաբաժինները, տոկոսները, ռոյալթիները, կառավարման, տեխնիկական օժանդակության համար և այլ վճարները, տուրքերը եւ ներդրումներից բխող այլ ընթացիկ եկամուտները,

գ) պայմանագրի վճարումների համար անհրաժեշտ գումարները, այդ թվում՝ գումարները վարկերի վերավճարման համար,

դ) հասույթը ներդրումների ամբողջական կամ մասնակի վաճառքից կամ լուծարումից, այդ թվում, ներդրված կապիտալի աճը,

ե) մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում ներդրումների կառավարման և զարգացման համար ծախսված գումարները,

զ) սույն Համաձայնագրի Հոդված 4-ին և Հոդված 5-ին համապատասխան փոխհատուցման վճարները,

է) ծագող վեճերի կարգավորման արդյունքում առաջացած վճարները:

2. Փոխանցումները կատարվում են ազատ փոխարկերի արժույթով փոխանցման օրը գործող փոխանակման շուկայական դրույքով՝ առանց հետաձգման:

ՀՈԴՎԱԾ 7

Սուբրոգացիա

1. Եթե մի Պայմանավորվող Կողմը կամ իր լիազոր մարմինը վճարում է կատարում իր ներդրողին մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում իրականացված ներդրումների համար՝ երաշխավորագրի կամ վնասների փոխհատուցման հիման վրա, ապա մյուս Պայմանավորվող Կողմը պետք է ճանաչի.

ա) առաջին Պայմանավորվող Կողմին կամ նրա լիազորած մարմնին այդ ներդրողի ցանկացած իրավունքի կամ պահանջի փոխանցումը, համաձայն այդ պետության օրենսդրության, ինչպես նաև

բ) առաջին Պայմանավորվող Կողմը կամ նրա լիազորած մարմինը սուբրոգացիայի իրավունքով ստանում է ներդրողի իրավունքները իրացնելու և նրա պահանջները ներկայացնելու իրավունք:

2. Սուբրոգացիայի արդյունքում ստացված իրավունքները կամ պահանջները չեն կարող գերազանցել ներդրողի սկզբնական իրավունքները և պահանջները:

ՀՈԴՎԱԾ 8

Պայմանավորվող Կողմի և Ներդրողի միջև վեճերի կարգավորումը

1. Մեկ Պայմանավորվող Կողմի և մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողի միջև ծագած վեճերը կապված Պայմանավորվող Կողմի պետության տարածքում այդ ներդրողի կատարած ներդրման հետ՝ հնարավորության սահմաններում կարգավորվում են բանակցությունների միջոցով:

2. Եթե վեճը հնարավոր չէ կարգավորել բանակցությունների միջոցով նախաձեռնող կողմի կողմից վեճի վերաբերյալ մյուս կողմին գրավոր կերպով տեղեկացման օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա ներդրողի հայեցողությամբ վեճը կարող է ներկայացվել.

ա) վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող Կողմի իրավասու դատարան կամ վարչական տրիբունալ, կամ

բ) 1965թ.-ի մարտի 18-ին Վաշինգտոնում ստորագրված «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման» Կոնվենցիայի ներքո հիմնադրված Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային Կենտրոն (ICSID), եթե երկու Պայմանավորվող Կողմերը հանդիսանում են այդ Կոնվենցիայի անդամ:

գ) Միացյալ Ազգերի Միջազգային Առևտրային Իրավունքի Հանձնաժողովի (UNCITRAL) Արբիտրաժային Կանոնների համաձայն հիմնված ad hoc արբիտրաժային դատարան կամ դատավորին: Վեճի կողմերը կարող են համաձայնվել սույն կանոնների փոփոխմանը:

դ) Արբիտրաժային կանոնակարգին համաձայն հիմնված և վեճի կողմերի միջև համաձայնեցված միջնորդ դատարան:

3. Արբիտրաժային դատարանը օրենքի հիման վրա պետք է որոշում կայացնի հետևյալ հաջորդականությամբ.

- սույն Համաձայնագրի դրույթները և Պայմանավորվող Կողմերի միջև առկա այլ համակցված Համաձայնագրերը

- Պայմանավորվող Կողմերի գործող օրենսդրությունը խնդրո առարկայի վերաբերյալ,

- հյուրընկալող Պայմանավորվող Կողմի և ներդրողի միջև կնքված ներդրումների առնչվող այլ հատուկ համաձայնագրերի դրույթները,

- միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները:

Միջնորդ դատարանի որոշումները վերջնական և պարտադիր են վեճի մասնակից կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պարտավորվում է իրականացնել որոշումները իր ազգային օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Պայմանավորվող Կողմերի միջև վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը հնարավորության դեպքում կլուծվեն բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով:

2. Եթե վեճը չի կարգավորվում վեց ամսվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվել են նշյալ խորհրդատվությունները կամ ներգրավվել են այլ դիվանագիտական կապուղիները, ապա որևէ Պայմանավորվող Կողմի պահանջով այն պետք է ներկայացվի Միջնորդ Դատարան, համաձայն սույն Հոդվածի դրույթների:

3. Միջնորդ դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կկազմավորվի հետևյալ կերպ: Միջնորդ դատավարության պահանջի ստացումից հետո երկու ամսվա ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պետք է նշանակի դատարանի մեկական անդամ՝ միջնորդ դատավոր: Երրորդ անդամը՝ Նախագահողը, որը պետք է լինի երրորդ պետության քաղաքացի, ընտրվում է Պայմանավորվող Կողմերի հավանությամբ: Նախագահողը պետք է նշանակվի մյուս երկու անդամների նշանակման օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում:

4. Եթե սույն Հոդվածի 3-րդ կետով նախատեսված ժամանակահատվածներում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվել, յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, անհրաժեշտ նշանակումները կատարելու համար կարող է դիմել Միջազգային Դատարանի Նախագահին: Եթե Նախագահը որևէ Պայմանավորվող Կողմի պետության քաղաքացի է կամ, եթե որևէ այլ պատճառով չի կարող կատարել նշված գործառույթը, ապա նշանակումները կատարելու համար պետք է հրավիրվի Դատարանի այն անդամը, որը հաջորդն է ավագության սկզբունքով և որևէ Պայմանավորվող Կողմի պետության քաղաքացի չէ:

5. Միջնորդ դատարանը որոշումը կկայացնի ձայների մեծամասնությամբ: Այդպիսի որոշումը պարտադիր է Պայմանավորվող Կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ կրում է իր միջնորդ դատավորի և դատական գործընթացում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Նախագահողի ծախսերը և մնացած ծախսերը երկու Պայմանավորվող Կողմերը կրում են հավասար մասնաբաժիններով: Այնուամենայնիվ, Միջնորդ Դատարանը կարող է հաստատել իր սեփական ընթացակարգը:

ՀՈԴՎԱԾ 10

Այլ կանոնների կիրառումը

Եթե միջազգային իրավունքի համաձայն Պայմանավորվող Կողմերի կողմից ստանձնած պարտավորությունները նրանց միջև կնքված կամ հետագայում կնքվելիք համաձայնագրերով, ի լրումն սույն Համաձայնագրի, պարունակեն դրույթներ (կանոններ)՝ ընդհանուր կամ հատուկ, որոնք յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի ներդրողին տրամադրում է ավելի բարենպաստ ռեժիմ, քան նախատեսվում է սույն Համաձայնագրով, ապա այդպիսի դրույթները (կանոնները) այն աստիճանով, որքանով դրանք ավելի բարենպաստ են, կգերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի կիրառելիությունը

Սույն Համաձայնագրի դրույթները կկիրառվեն ինչպես այն ներդրումների, որոնք իրականացվել են որևէ Պայմանավորվող Կողմի պետության տարածքում վերջինիս օրենսդրությանը համաձայն մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, այնպես էլ դրանից հետո կատարված ներդրումների նկատմամբ: Այնուամենայնիվ, սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվի այն վեճերի նկատմամբ, որոնք առաջացել են մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

ՀՈԴՎԱԾ 12

Փոփոխությունները և լրացումները

Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին արձանագրություններով և որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի Հոդված 13-ի դրույթներին համաձայն:

ՀՈԴՎԱԾ 13

Ուժի մեջ մտնելը, տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Պայմանավորվող կողմի վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող կողմի կողմից ստանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը գործում է տասը (10) տարի ժամկետով և կշարունակի մնալ ուժի մեջ նույն ժամանակահատվածներով մինչև Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն մեկ տարի առաջ Պայմանավորվող Կողմերից որևէ մեկը գրավոր ծանուցում չներկայացնի մյուս Պայմանավորվող Կողմին այն դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետը, սույն Համաձայնագրի դրույթները կգործեն դադարեցումից հետո հաջորդ տասը (10) տարիների ընթացքում:

Ի վկայություն վերը նշվածի՝ ներքոստորագրողները, լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից պատշաճորեն լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է _____ քաղաքում 201__ թվականի _____-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

MODEL OF AGREEMENT
BETWEEN
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND
THE GOVERNMENT OF _____
ON THE PROMOTION AND RECIPROCAL PROTECTION OF INVESTMENT

The Government of the Republic of Armenia and the Government of _____,
hereinafter referred to as the "Contracting Parties";

Desiring to promote mutually beneficial economic cooperation between them;

Aiming to create favorable conditions with respect to investments by investors of the State
of one Contracting Party in the territory of the State of the other Contracting Party;

Recognizing that the encouragement and reciprocal protection of such investments will be
conducive to the stimulation of business initiative in the States of both Contracting Parties;

Have agreed as follows:

Article 1

Definitions

For the purposes of this Agreement:

1. The term "investment" shall mean every kind of asset or rights, that is invested by
an investor of the State of one Contracting Party in the territory of the State of another
Contracting Party, according to the legislation of the later, and includes in particular, but not
exclusively:

(a) shares, stocks, and other forms of equity participation, debentures and other
forms of debt interests in a company, other debts and loans issued by any investor of a State of
the Contracting Party;

(b) claims to money and claims to any other assets or performance pursuant to a
contract having an economic value;

(c) intellectual property rights, including, in particular, but not exclusively, copyrights, trademarks, patents, industrial designs and patterns and technical processes, know-how, trade secrets, trade names and goodwill;

(d) any right conferred pursuant to domestic law of the Contracting Party where the investments are made, contract or by virtue of any licenses or permits, including rights to prospect, explore, extract, or utilize natural resources, and rights to undertake other economic or commercial activities or to render services;

(e) any other tangible and intangible, movable and immovable property, and related property rights, such as leases, mortgages, liens and pledges.

The term "investment" shall also apply to returns retained for the purpose of re-investment and to proceeds from realization

Any change in the form in which assets or rights are invested or reinvested shall not affect their character as investments.

2. The term "investor of a Contracting Party" with respect to each Contracting Party shall mean:

(a) a national or an enterprise of a Contracting Party, that attempts to make, is making, or has made an investment in the territory of the other Contracting Party, provided, however, that a natural person, who is a dual national, shall be deemed to be exclusively a national of the State of his or her dominant and effective nationality;

(b) any enterprise constituted or incorporated under the laws and regulations of that Contracting Party, that is recognized as a legal entity, is located in the territory of a Party and carrying out business activities there.

3. The term "enterprise" shall mean any legal entity, whether or not for profit, and whether privately or governmentally owned or controlled, which is constituted under applicable law of a Contracting Party or is owned or effectively controlled by investors of a Contracting Party, including a corporation, trust, partnership, branch, joint venture, association or other similar organization.

4. The term "returns" shall mean amounts yielded by an investment, irrespective of the form in which they are paid, and in particular, but not exclusively, include profits, interest,

capital gains, dividends, royalties, and management fees, technical assistance or other payments in kind, regardless of its type.

5. The term "liquidation" shall mean any disposal effected for the purpose of completely or partly suspending an investment.

6. The term "territory" means:

With respect to the Republic of Armenia: land territory of the Republic of Armenia, territorial waters and airspace above them, over which the Republic of Armenia exercises sovereign rights and jurisdiction in accordance with its national laws in force and international law.

With respect to _____: land territory of _____, territorial waters, contiguous area beyond the territorial sea and airspace above them, over which _____ exercises sovereign rights and jurisdiction in accordance with its national laws in force and international law.

7. The term "freely usable currency" shall mean "freely usable currency" as determined by the International Monetary Fund under its Articles of Agreement.

8. The term "without delay" shall mean such period as is normally required for the completion of necessary formalities for the transfer of payments. The mentioned period shall commence on the day on which the request for transfer has been submitted and may on no account exceed one month.

Article 2

Promotion and Protection of Investments

1. Each Contracting Party shall encourage and create favorable conditions for investments of investors of the other Contracting Party in its territory, and, subject to its right to exercise powers conferred by its laws, shall admit such investments.

2. Investments of investors of a Contracting Party shall at all times be accorded fair and equitable treatment and shall enjoy full protection and security in the territory of the other Contracting Party in a manner consistent with recognized principles of International Law and the provisions of this Agreement. Neither Contracting Party shall in any way impair by unreasonable

or discriminatory measures the management, maintenance, use, enjoyment or disposal of investments in the territory of investors of the other Contracting Party.

3. Once established, investments of investors of either Contracting Party shall not be subject to additional performance requirements which may be detrimental to their viability or adversely affect their use, management, conduct, operation, expansion, sale or other disposition.

Article 3

Treatment of Investments

1. Each Contracting Party shall accord to investments and returns of investors of the other Contracting Party treatment no less favorable than that accords, in like circumstances, to its own investors or to investors of any non-Party state with respect to investments and returns in its territory, whichever is more favorable.

2. Each Contracting Party shall accord to investors of the other Contracting party treatment no less favorable than that it accords, in like circumstances, to its own investors or to investors of any non-Party with respect to the management, maintenance, application, ownership and other disposal of investments in its territory, whichever is more favorable.

3. The provisions of national regime and the most favorable regime of this article do not apply to all current or future benefits, which each Contracting Party provided in accordance with the customs, economic or monetary union, common market or free trade area membership or on relation basis.

4. Each of the Contracting Parties shall except obligations of the other Contracting Party resulting from membership to any customs union or economic or monetary union, common market or free trade area, including its obligations related to customs union or economic or monetary union, common market or free trade area according to the international or reciprocal agreement.

5. The provisions of this Agreement shouldn't be interpreted as an obligation of one Contracting Party to extend the benefits, advantages and privileges which can be provided by the first Contracting Party according to any international agreement or arrangement.

6. For greater certainty, the provisions of this Article shall apply only to treatment defined by Articles 2 and 6 of this Agreement and shall not be applied to any right of investors arisen in the process of dispute settlement.

Article 4

Compensation for Losses

1. When investments made by an investor of either Contracting Party suffers a loss owing to war or other armed conflict, emergency, revolt, civil disturbances, insurrection, riot or other similar events in the territory of the other Contracting Party, he shall be accorded by the latter Contracting Party, treatment not less favorable than that the latter Contracting Party accords to its own investors or investors of any third Party, in like circumstances, whichever is more favorable.

2. Without prejudice to paragraph 1, investors of one Contracting Party who in any of the events referred to in that paragraph suffers a loss in the territory of the other Contracting Party resulting from:

(a) requisitioning of its investments or part thereof by its forces or authorities;

(b) destruction of its investments or part thereof by its forces or authorities which was not caused in combat action or was not required by the necessity of the situation.

shall be accorded restitution or prior, adequate compensation which shall be not less favorable than that the latter Contracting Party accords to its own investors or investors of any third Party, in like circumstances.

Article 5

Expropriation and Compensation

1. Investments made by investors of either Contracting Party in the territory of the other Contracting Party shall not be expropriated or nationalized, or be subject to direct or indirect measures having effect equivalent to nationalization or expropriation (hereinafter

collectively referred to as "expropriation") by the other Contracting Party except for a public purpose. Expropriation shall be made in accordance with the legislation in force of the latter Contracting Party against prior, adequate and effective compensation and on condition that such measures were taken on a non-discriminatory basis. Such compensation shall amount to the fair market value of the expropriated investment immediately before expropriation was taken or before the impending expropriation became public knowledge, whichever is the earlier. Such compensation shall be completely liquid and freely usable and shall be paid without delay.

2. The investor affected shall have a right to prompt review of his case by a judicial or other plenipotentiary or independent body of the Contracting Party, that realize expropriation, in accordance with the legislation in force of the latter, including valuation of the investments and payment of compensation according to principles stipulated in this article. Such compensation shall be calculated in a freely usable currency to be chosen by the investor, on the basis of the prevailing market rate of exchange for that currency on the valuation date and shall include interest at a commercial rate established on a market basis, however, in no event less than the prevailing LIBOR - rate of interest or equivalent, from the date of expropriation until the date of payment.

3. For further certainty, expropriation shall include situations where a Contracting Party expropriates the assets of a company or enterprise that is incorporated or established under the laws in force in its own territory in which an investor of the other Contracting Party has an investment, including through the ownership of shares, stocks, debentures or other rights or interests.

Article 6

Transfers

1. Each Contracting Party shall guarantee all transfers relating to investments of other Contracting Party to be made freely and without delay into and out of its territory. Such transfers include:

- (a) extra money for maintenance and expansion of capital and investments ;

(b) net profits, capital gains, dividends, interest, royalty payments, management fees and technical assistance and other fees, duties and current income from investments after making payments according to the legislation of the Contracting Party;

(c) payments made under a contract, including payments for loan agreement repayment;

(d) proceeds from the sale of all of any part of the investment or from the partial or complete liquidation of the investment, including invested capital growth;

(e) amount spent in the territory of the other Contracting Party for the purposes of the investment expansion and management;

(f) payments made pursuant to Article 4 and Article 5 of this Agreement;

(g) payments arising out of dispute settlement.

2. Transfers shall be made without delay, in a freely usable currency at the market rate of exchange prevailing at the time of transfer.

Article 7

Subrogation

1. If a Contracting Party or its designated agency (the "Indemnifying Party"), makes a payment under an indemnity or guarantee it has assumed in respect of an investment in the territory of the other Contracting Party, the latter shall recognize:

(a) the assignment to the Indemnifying Party by law or by legal transaction of all the rights and claims resulting from such an investment;

(b) the right of the Indemnifying Party to exercise all such rights and enforce such claims and to assume all obligations related to the investment by virtue of subrogation.

2. The subrogated rights or claims shall not exceed the original rights or claims of the investor.

Article 8

Settlement of Disputes Between a Contracting Party and an Investor

1. Disputes arising between a Contracting Party and an investor of the other Contracting Party in respect of an investment of the latter in the territory of the former shall, as far as possible, be settled amicably.

2. If such disputes cannot be settled within a period of six months from the date at which either party to the dispute requested amicable settlement by delivering a notice in writing to the other party, the dispute shall be submitted for resolution, at the election of the investor party, through one of the following bodies:

(a) administrative tribunal or arbitration of a Contracting Party, which is a party of dispute;

(b) The International Centre for Settlement of Investment Disputes ("ICSID"), established pursuant to the Convention on the Settlement of Investment Disputes between States and Nationals of other States done at Washington, 18 March 1965 ("ICSID Convention"), if both Contracting Parties are parties to the ICSID Convention;

(c) an arbitral tribunal ad hoc established under the Arbitration Rules (the "Rules") of the United Nations Commission on International Trade Law (UNCITRAL), as those Rules may be modified by the parties to the dispute;

(d) an arbitral tribunal constituted pursuant to the arbitration rules of any arbitral institution mutually agreed upon between the parties to the dispute.

3. Arbitration court on the basis of appropriate legislation should decide the following sequence.

- The provisions of this Agreement and the other combined Agreements between the Contracting Parties

- the law in force of the Contracting Party concerned;

- The provisions of other special agreements signed between the host Contracting Party and an investor;

- general principles of international law.

The arbitral awards shall be final and binding on both parties and shall be enforceable by each of Contracting Parties in accordance with the domestic legislation.

Article 9

Settlement of Disputes Between the Contracting Parties

1. The Contracting Parties shall, as far as possible, settle any dispute concerning the interpretation or application of this Agreement through consultations or negotiations.

2. If the dispute has not been settled within six months following the date on which such consultations or other diplomatic channels were requested, any of Contracting Party shall submit the dispute to an ad hoc arbitral tribunal in accordance with the following provisions of this Article.

3. The arbitral tribunal for each certain case shall be constituted as follows: the tribunal shall comprise three arbitrators, one arbitrator appointed by each of the disputing parties within two month from the date on which either Contracting Party has informed the other Contracting Party that it intends to submit the dispute to an arbitral tribunal. The third arbitrator, who shall be a national of a Non-Party State and the presiding arbitrator, appointed by agreement of the disputing parties. The presiding arbitrator shall be appointed within tree month from the date of appointment of other two arbitrators.

4. If the periods specified in paragraph 3 above have not been complied with, either Contracting Party may, in the absence of any other arrangement, invite the President of the International Court of Justice to make the necessary appointments. If the President of the International Court of Justice is a national of either Contracting Party or if he is otherwise prevented from discharging the mentioned function, the member of the International Court of Justice next in seniority who is not a national of either Contracting Party shall be invited to make the necessary appointments.

5. The arbitral tribunal shall take its decision by a majority of votes. Each Contracting Party shall bear the costs of the member of the arbitral tribunal appointed by that Contracting Party, as well as the costs for its representation in the arbitration proceedings. The expenses of the Chairman as well as any other costs of the arbitration proceedings shall be borne in equal

parts by the two Contracting Parties. However, the arbitral tribunal shall determine its own procedure.

Article 10

Application of Other Rules

If the obligations of Contracting Parties under international law existing at present or established hereafter between them, in addition to this Agreement, contain rules, whether general or specific, entitling investments by investors of the other Contracting Party to a treatment more favorable than is provided for by this Agreement, such rules shall prevail over this Agreement to the extent that they are more favorable to the investor.

Article 11

Scope of the Agreement

This Agreement shall apply to all investments, whether existing at or made after the date of its entry into force by investors of either Contracting Party in the territory of the other Contracting Party according to the legislation of the latter. However, the provisions of this Agreement Contracting shall not apply to claims arising out of events which occurred, or to claims which had been settled, prior to its entry into force.

Article 12

Changes and Amendments

This Agreement can be changed and amended by initiative and mutual consent of the Contracting Parties, which shall be legalized as separate reports, that forms an integral part of the Agreement, and shall enter into force in accordance with Article 13 of this Agreement.

Article 13

Entry into Force, Duration, and Termination

1. This Agreement shall enter into force from the day the other Contracting Party receives the latest written notice of the Contracting Party on making the necessary internal procedures for entering into force by diplomatic channels.

2. This Agreement shall remain in force for a period of ten (10) years and shall continue in force thereafter for similar period or periods unless, at least one year before the expiry of the initial or any subsequent period, either Contracting Party notifies the other Contracting Party in writing of its intention to terminate this Agreement.

3. For ten years (10) from the date of termination, all Articles of this Agreement shall continue to apply to investments made prior to the date of termination.

In witness whereof, the respective plenipotentiaries of both Contracting Parties have signed this Agreement.

Done at on 201_ in two originals in the Armenian and English languages, all texts being equally authentic. In case of divergence, the English text shall prevail.

For the Government of the Republic of
Armenia

For the Government of _____